ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՆԱԽՈՐՀՈՒՐԴ
Всеармянский Сенат
PANARMENIAN SENAT
http://senate.panarm.info/concept

N 10 / 11.04.2019 թ .

Հայաստանի Հանրապետության

Ազգային Ժողովի նախագահ Ա. Միրզոյանին

Արցախի Հանրապետության

Ազգային Ժողովի նախագահ Ա. Ղուլյանին

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին և Արցախի Հանրապետության Ազգային Ժողովին ենք հանձնում Հայաստանի Հանրապետության կառավարության, Արցախի Հանրապետության կառավարության, Արևմտյան Հայաստան Պետության վտարանդի կառավարության իրավաքաղաքական համագործակցության դրույթները՝ Հայաստան Պետության սահմանները ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վ .Վիլսոնի կայացրած Իրավարար վճռով և միջազգային իրավունքներով ճանաչելու, վերականգնելու մասին

Դրույթներ

Համաշխարհային քաղաքակրթական ձևաչափերը արդի աշխարհում տնտեսապես թույլ զարգացած պետություններին առաջադրում են իրավաքաղաքական և հասարակական գործունեության պարտադրված ընթացակարգ: Հաշվի առնենք, որ պարտադրված ընթացակարգի հետեւանքով հայոց իրավունքի տակ մնացել է մոտ 40 հազար քառ. կմ տարածք: Հետեւաբար, համաշխարհային հանրությանը պարտավոր ենք ներկայացնել թե ո՞վ ենք մենք, ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր ենք գնում, ի՞նչ ունենք և ի՞նչ ենք կորցրել:

Ժամանակակից աշխարհում որևէ իրավական, քաղաքական, ազգային ու միջազգային, ինչպես նաեւ կառավարման ու տնտեսական ոլորտների խնդիրները պետք է լուծել այլազանությունների (diversificatio) և արհեստագիտական նորարարությունների (Innovatio) միջոցով: Այդ տեսանկյունից Հայաստան Պետության տարածքային իրավունքների վերականգնումը դառնում է անկյունաքարային, ուստի այս խնդրի լուծմանը նպաստող գործառույթների իրականացման համար կարևոր նշանակություն ունի նաև գործիքակազմի ճիշտ ընտրությունը: Շատ կարևոր է ժամանակակից արհեստագիտական (technology) և նորագույն մեթոդների օգտագործման միջոցով արագացված թափով ոչ միայն վերականգնել, այլև կոտրել այն բոլոր արգելապատնեշներն ու իրավա-քաղաքական կարծրատիպերը, որոնք խոչընդոտում են հայոց անժամանցելի և անօտարելի իրավունքները կենսագործելու համար:

Հայկական ինքնությունների (subjectum) ձեւավորման իրավաչափությունը

միջազգային մասնավոր իրավունքի շրջանակներում

1.Անցած հարյուրամյակում Հայկական Բարձրավանդակը սկզբունքորեն հայաթափվեց: Հայ ազգը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, ազգի ամբողջ ժառանգությունը բռնազավթվեց եւ օտարվեց հայրենիքի մի հատվածը՝ Արևմտյան Հայաստանը: 1920/1921թ.թ. Արևելյան Հայաստանից օտարվեցին, ապա հայաթափվեցին Կարսի նահանգը և Սուրմալուն: Նախիջևանը վերջնականապես հայաթափվեց 1988 թ, իսկ Հյուսիսային Արցախը՝ 1989 թ: Այսպիսով, այս ընթացքում Հայկական Բարձրավանդակը ենթարկվել եւ ենթարկվում է ծրագրավորված և պլանավորված հայաթափման, ինչի հետևանքով Հայաստանի

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • REPUBLIC OF WESTERN ARMENIA

Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում ապրում է մոտ երեք և կես միլիոն հայություն, իսկ ամբողջ աշխարհում ապրում են ավելի քան տասներկու միլիոն հայ:

2. Ցեղասպանության և վտարումների հետևանքով հայրենազրկված և ունեզրկված, աշխարհով մեկ սփռված հայությունը ձևավորեց գաղթօջախներ, որոնք ի զորու չեղան համախմբելու համայն հայությանը:

3. Հայաստան Պետության վերականգնման և հայրենատիրության հիմնախնդիրը մշտապես եղել է աշխարհի տարբեր երկրների հայկական գաղթօջախներում գործող կառույցների հասարակական ծրագրերի մասը :

4. Անցած հարյուր տարիները ցույց տվեցին, որ արտերկրում հայրենատիրության իրավաքաղաքական հիմնախնդիրների իրականացումը արդյունավետ չի եղել: Ավանդական կուսակցություններն ի զորու չեղան իրականացնելու իրենց հիմնական գործառույթը՝ հայրենիքից դուրս իշխանության ձևավորումը: Անհեռանկարային էր հայրենատիրության հարցը թողնել ավանդական կուսակցությունների հույսին:

Հայկական ինքնությունները (subjectum)

1. Հայաստանի Հանրապետություն, Արևելյան Հայաստանի մի մասի վրա հայկական պետական կազմավորում՝ միջազգայնորեն ճանաչված իրավաքաղաքական կարգավիճակով:

2.Արցախի Հանրապետություն, միջազգայնորեն չճանաչված պետական կազմավորում Արևելյան Հայաստանի Հարավային Արցախի տարածքի վրա՝ առկախ իրավաքաղաքական կարգավիճակով:

3.Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն (ԱՀՎԿ), ցեղասպանության զոհերի և ցեղասպանությունից փրկված արևմտահայերի ժառանգների իրավունքները իրենց բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ վերականգնելու նպատակով ստեղծված իրավական (de jure) և փաստացի (de facto) իրավաքաղաքական պետական կառույց:

4.Նախիջևանի վարչական մարմին, ՀՀ տարածքում նախիջևանահայության իրավունքները իրենց բնօրրանում վերականգնելու նպատակով ձևավորված կառույց՝ առկախ իրավաքաղաքական կարգավիճակով:

5.Համահայկական Վերնախորհուրդ՝ (Senat), համահայկական խնդիրները լուծելու, հայ ազգի արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմագրավելու, միասնական գործառույթներ սահմանելու և դրանք համակարգելու նպատակով ստեղծված համահայկական իրավաքաղաքական մարմին:

Սկսած 2011թ. հայկական պետության իրավունքը և հայրենատիրության իրավունքը նոր իրավաքաղաքական գործիքակազմով իրականացնում են.

* Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը՝ հռչակված 04.02.2011թ. Փարիզում, որպես ցեղասպանության զոհերի և փրկված արևմտահայերի ժառանգների իրավունքների լիիրավ տեր:

* Հայոց Թագադիր Խորհուրդը՝ հիմնադրված Լոնդոնում 08.01.2016թ. և Քյոլնում 25.08.2018թ. հիմնադրված Բագրատունյաց թագավորական տունը՝ հայոց գահի լիիրավ տերերը:

* Համահայկական Վերնախորհուրդ (Senat)՝ հիմնադրված Երևանում 08.23.2016թ, կոչված է համահայկական իրավաքաղաքական խնդիրները լուծելու, օժանդակելու, ՀՀ արտաքին ու ներքին մարտահարավերներին դիմագրավելու, միասնական գործառույթներ սահմանելու և համակարգելու համար:

ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • REPUBLIC OF WESTERN ARMENIA •

Հայրենատիրության կենսագործման հիմքը

Հայկական պետության իրավունքի վերականգնումը Վ.Վիլսոնի Իրավարար Վճռի սահմաններում հնարավոր է, եթե հայրենատիրության իրավունքը իրավաքաղաքական դաշտում կենսագործվում է հայկական ինքնությունների համատեղ գործունեությամբ: Հայրենատիրության իրավունքը միասնական օրակարգով կենսագործելու համար պետք է նկատի առնել.

* Արևելյան Հայաստանի, Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Սփյուռքի, գոյության փաստը,
* Արևմտյան Հայաստանի, Արևելյան Հայաստանի, Կիլիկիայի նկատմամբ իրավաքաղաքական միասնական պահանջի բացակայության փաստը,
* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Անթիլիասի, Արիադավան միաբանության ու այլ կրոնապատկան հայկական կառույցների, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանի Էջմիածնական թեմի հայրենատիրության գործունեությունը նույն ուղղվածությամբ ամբողջականացնելու անհրաժեշտության փաստը,
* Արտերկրում գործող ավանդական տնտեսավարողների և նպատակային ստեղծված տնտեսական կառույցների, մասնավորապես «ԱՊԱԳԱ» կոնսորցիումի (consorcium) հետ համագործակցելու անհրաժեշտության փաստը,
* Հայոց ազգային արժեհամակարգի ամբողջականացման անհրաժեշտությունը:
* Արևմտյան Հայաստանի, Արևելյան Հայաստանի, սփյուռքահայության լեզվական, մշակութային օտարումների ու սահմանափակումների գոյության փաստը,
* Հայկական պետահիրավական ու քաղաքական ինքնությունների առաջացման պատմական եւ քաղաքական պատճառները: Հայկական ինքնությունների գործունեության հնարավոր իրավական հիմնավորումների և ուղղորդումների ապահովման փաստը,
* Համահայկական պետահիրավական և իրավաքաղաքական ինքնությունների , նրանց իրավաքաղաքական կարգավիճակներից բխող գործառույթների համակարգման, ընդլայնման ու խորացման անհրաժեշտության փաստը,
* Հայ ազգի՝ իր հայրենիքում կայուն վերարտադրության ապահովման անհրաժեշտության փաստը՝ իրեն հատուկ ազգային մշակույթի շրջանակներում,

Ճանապարհային քարտեզ

Վերոշարադրյալը հնարավորություն է ստեղծում կազմելու հայության համագործակցության անելիքների ճանապարհային քարտեզը.

ա) Քաղաքական և տնտեսական փակուղուց հանել հայ-ռուսական հարաբերությունները՝ ձևավորված 1914թ. մինչև 2017թ., որի մեջ էր մեկ դար առաջ՝ ցեղասպանության, Օսմանյան և Ցարական Ռուսաստանի կայսրությունների փլուզման, ապա քեմալաբոլշևիկյան դաշինքով, հաշվի առնելով խորհրդային պետության կողմից հայ ժողովրդին պատկանող տարածքների օտարման փաստը:

բ) ԵՄ հետ հարաբերությունները տեղափոխել նոր իրավաքաղաքական հարթություն՝ հենվելով 1919-20 թթ. Փարիզյան վեհաժողովի, Սևրի Դաշնագրի և Առաջին համաշխարհային պատերազմում Հայաստանի Առաջին Հանրապետության՝ որպես հաղթող կողմի փաստի վրա,

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • REPUBLIC OF WESTERN ARMENIA

զ) ԱՄՆ-ի հետ հարաբերությունները տեղափոխել հայոց անժամանցելի իրավունքների կենսագործման դաշտ:

Հենվելով ԱՄՆ 28-րդ նախագահ Վ.Վիլսոնի անբեկանելի և անժամանցելի իրավարար վճռի վրա, առաջարկում ենք .

* Հրավիրել Համահայկական Վերնախորհրդի (Senat) երկրորդ նիստ՝ օրակարգում դնելով սույն փաստաթուղթը: Ճանաչել համահայկական Վերնախորհուրդը (Senat) որպես աշխարհասփյուռ հայության իրավունքները ներկայացնող իրավաքաղաքական կառույց:

* Ընդունել, ԱՄՆ պատկան մարմինների կողմից կոնգրեսական Ադամ ՇԻՖԻ գրասենյակի միջոցով Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարությանը փոխանցած Վ. Վիլսոնի Իրավարար վճռի 59-րդ կրկնօրինակը որպես լեգիտիմ փաստաթուղթ: *Կից՝ 1. լուսապատճեն:*

* Ճանաչել Նոյեմբերի 22-ը որպես համայն հայության հայրենատիրության օր:

* Սկսել Համահայկական Վերնախորհուրդի (Senat) միջոցով 1921 թվականի Մոսկվայի մարտի 16-ի և Կարսի հոկտեմբերի 13-ի պայմանագրերի չեղարկման գործընթաց՝ հիմք ընդունելով Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության՝ ՌԴ ՍԴ ներկայացրած հայցադիմումը և 2016 թ. N 370/15-01/16, 10.փետրվարի 2016 թ. ՌԴ ՍԴ պատասխանը: *Կից՝ 2.լուսապատճեն:*

* Սկսել, Համահայկական Վերնախորհուրդի (Senat) միջոցով իրավաքաղաքական գործընթաց՝ Սևրի դաշնագիրը ստորագրած պետությունների հետ:

* Սկսել, Համահայկական Վերնախորհուրդի (Senat) միջոցով իրավական գործընթաց՝ Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917թ. դեկտեմբերի 29 (1918 թվականի հունվարի 11)-ին ընդունած Թուրքահայաստանի մասին Դեկրետը ճանաչելու համար:

* Իրականացնել փաստահավաք աշխատանք՝ հենվելով «Հայ Դատի», Հայ Առաքելական Եկեղեցու և այլ կողմերի ներկայացրած նյութերին:

* Ներկայացնել ԵԱՀԿ-ի Մինսկի համանախագահներին և ՌԴ-ն կառավարությանը Կավբյուրոյի (Кавказкое бюро) որոշումը առոչինչ ճանաչելու հարցը և Արցախի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորման իրականացման ծրագիրը՝ փաստացի (de facto) տարածքներով հանդերձ:

* Առաջադրել ՀՀ-ն դիվանագիտական մարմնին՝ սույն դրույթների կիրառմամբ մշակել արտաքին քաղաքականության նոր ռազմավարություն, կենսագործել հայ ժողովրդի հայրենատիրության իրավունքը՝ հենվելով երկու Գերմանիաների վերամիավորման իրավական (de jure) և փաստացի (de facto) նախադեպային իրավունքի վրա, հաշվի առնելով Հելսինկյան ակտի առաջնային ստորագրողների կամքը:

Եզրափակում

ՀՀ-ն՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, գլխավոր խնդիրն է նոր իրավաքաղաքական գործիքակազմով կենսագործել հայկական պետության և հայրենատիրության առանցքային իրավունքները, վերականգնել հայ ազգի և հայ մշակույթի ամբողջականությունը:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF WESTERN ARMENIA

Հաշվի առնելով, որ

* ՀՀ-ն անկախության հռչակումից հետո ՀՀ կառավարությունները չեն կարողացել զբաղվել ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վ.Վիլսոնի կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու ուղղությամբ.

Արձանագրելով, որ

* ՀՀ նախագահներն իրենց ելույթներում բարձրացրել են պահանջատիրության խնդիրները, բայց պահանջատիրության խնդիրների լուծումը թողել են ապագա սերունդներին: *Կից՝ 3. հիմնավորումը:*

Նկատի ունենալով, որ

* ՀՀ իշխանությունները ԵԱՀԿ-ի Մինսկի համանախագահների հետ բանակցելիս առաջադրել են Արցախի պատմական պատկանելության հարցը, բայց չեն պահանջել 1921 թ. Մոսկվայի մարտի 16-ի, 1921 թվականի հուլիսի 4-5 -ը կայացրած Կավբյուրոյի (Кавказкое бюро) որոշման և Կարսի հոկտեմբերի 13 -ի պայմանագրերի չեղարկումը,

Փաստելով, որ.

* ՀՀ-ն Արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ նախագահները միջազգային հանրության և ատյանների առջև երբեք չեն բարձրացրել Առաջին համաշխարհային պատերազմում Հայաստանի Առաջին Հանրապետության՝ որպես հաղթող կողմի իրողությունը և Թուրքիայի Հանրապետության հետ հարաբերություններները կառուցում են «առանց նախապայմանների» մոտեցմամբ:

Համարում ենք.

Նոր իրավիճակում Համահայկական Վերնախորհուրդը կարող է դառնալ այն համահայկական կառույցը, որի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության իրավական (de jure) և փաստացի (de facto) վերամիավորմամբ կդառնան Հայաստան Պետության վերակերտման մի բաղադրիչը Արևելյան Հայաստանում: Համահայկական Վերնախորհուրդը ի վիճակի է միջազգային տարբեր հարթակներում ներկայացնել հայոց անժամանցելի իրավունքը, որով հնարավորություն ենք ստանում վեր հանելու և ներկայացնելու միջազգային հանրությանը՝ միջազգային իրավունքի շրջանակներում իրավական լուծում ստացած, սակայն հետագայում չկիրառված միջազգային պայմանագրերը և Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, որով իրավականորեն (de jure) ճանաչված է Հայաստան Պետության տարածքային իրավունքները և սահմանազատումը հարևան պետությունների Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ:

Համահայկական Վերնախորհուրդ	Վահե Մեսրոպյան
Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիա	Կարինե Հայրապետյան
Թագաղիր Գերազույն Խորհուրդ	
Բագրատունյաց Անգեղատուն Միաբանություն	Տիգրան Բագրատունի
«Տեսակետ» հաղորդաշարի հիմնադիր	Արմեն Բարսեղյան
«Շուշի» հիմնադրամ	Բակուր Կարապետյան

ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • REPUBLIC OF WESTERN ARMENIA •

«Հայրենիք» հայրենակցական միությունների

համակարգող խորհուրդ Դավիթ Ալեքսանյան

Համահայկական Կոնգրես Արմեն Բաղալյան

Հաստատված են բոլոր ստորագրությունները

Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության

Ազգային Ժողով

Արամ Մկրտչյան

Պատասխանատու կատարող Ազատ Սարգսյան

բջջային հեռախոս 093217350